# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ՝ ԿԱՋՄԱՎՈՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՆ, ՈՐ Ի ԳԵՐՄԱՆԻԱ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Գերմանիայի հայոց թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչեանին, թեմի հոգեւոր դասին, վարչական պաշտօնէութեանն ու հաւատացեալ հայորդիներին եւ սրտաբուխ շնորհաւորում Տիրախնամ թեմի հիմնադրման 10-ամեայ յոբելեանի առիթով:

Սիրելի հաւատաւոր զաւակներ Մայր Եկեղեցւոյ.

Առանձնակի ջերմ յուշերով ենք կապուած Գերմանիայի հայոց թեմի հետ, որտեղ հովուական ծառայութեան անդրանիկ քայլերն ենք կատարել Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շրջանին: Գերմանիայում ծառայութեան ու ուսումնառութեան տարիներից քաջածանօթ ենք տեղի հայ գաղութի՝ առ Աստուած անկեղծ հաւատին, առ Մայր Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ունեցած սիրուն ու նուիրումին, որ մշտապէս արդիւնաւորում է եկեղեցաշէն ու ազգանուէր բարի ձեռնարկումներով:

Բարձր ենք գնահատում թեմական բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչեանի նախաձեռնողիր ջանքերն ու առաջնորդի պաշտօնում 10-ամեայ ծառայութեան վաստակը:

Սիրելի Սրբազան, ուրախութեամբ ենք արձանագրում, որ տարիների Ձեր անսակարկ սպասաւորութեան արդիւնքում կազմակերպուել է թեմական բնականոն կեանքը, համալրուել հոգեւոր դասը, եւ Գերմանիայում բնակուող հայորդիք աւելի ու աւելի են կապւում Եկեղեցուն, լցւում հաւատով եւ զօրացնում եկեղեցասիրութեան ու հայրենասիրութեան իրենց ոգին:

Ձեր հետեւողական ջանքերի շնորհիւ այսօր Մայր Աթոռի մի շարք երիտասարդ միաբաններ շարունակում են իրենց ուսումը Գերմանիայի համբաւաշատ կրթօջախներում՝ միաժամանակ հովուական ծառայութիւն մատուցելով Գերմանիոյ բարեպաշտ մեր ժողովրդին: Արդարեւ, ներկայիս անչափ կարեւոր է, որ հոգեւորականաց նոր սերունդը լինի առաւել բանիմաց եւ ուսեալ, հաղորդ ներկայ դարի աստուածաբանական ու գիտական մտքի առաջընթացին, կարող՝ արժեւորելու էկումենիզմի ոգին եւ այն կեանքի կոչելու:

Գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում նաեւ թեմի հոգեւոր դասին եւ վարչական պաշտօնէութեանը, որ, օգնական ու աջակից թեմական առաջնորդին, սիրով ու պատրաստակամութեամբ ներդնում են իրենց կարողութիւնները՝ ի խնդիր Մայր Եկեղեցու պայծառութեան եւ հաւատացեալ հայութեան հոգեւոր կեանքի զօրացման: Վստահ ենք, որ տասնամեայ յոբելեանի խորհրդով նորոգեալ, թեմի բոլոր նուիրեալներդ առաւել քաջեռանդութեամբ ու նախանձախնդրութեամբ պիտի ծառայէք Մայր Եկեղեցուն ու Հայրենիքին, Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Սիրելիներ. մասնակից տօնի Ձեր խնդութեանը, ի խոյոց սրտի Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Աստուած՝ հայցելով, որ մշտապէս հաստատուն ու շէն պահպանի Գերմանիայի հայոց թեմը՝ ի փառս Իր Սուրբ Անուան եւ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարձրեալ Տէրը քաջառողջութեամբ ու երկնառաք շնորհների առատութեամբ օրհնի Տիրախնամ թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչեանին, թեմի հոգեւոր դասին եւ վարչական պաշտօնէութեանը՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով եկեղեցաշէն պատասխանատուութեանց մէջ:

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»*:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 30-ն Հոկտեմբերի
Ցամի Տեառն 2001 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
Ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 197